ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-9/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ (ՀՄԱ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **08.05.2019թ.**

ժամը 12:00

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲԱ ապահովման բաժնի պետ Ա.Նազարյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը,
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի սպա բ/ծ մայոր Մ.Գալստյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲԱԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-9/3» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «**ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-9/3**» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «**ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-9/3**» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

(Մ.Ամիրյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար **դեղորայքի** ձեռքբերման նպատակով կազմակերպված «**ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-9/3**» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1	«ԼԵՅԿՈ» ՍՊԸ
2	«Արֆարմացիա» ՓԲԸ
3	«Թեոֆարմա» ՍՊԸ
4	«Նատալի ֆարմ» ՍՊԸ
5	«Լինկվոր» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-9/3» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են բացառությամբ հետևյալ դեպքերի.
-«Արֆարմացիա» ՓԲԸ -ի կողմից ներկայացված հայտով հրավերի N 3.1 հավելվածում /մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ աղուսակի 5-րդ սյունակում /տեխնիկական բնութագիր/ նշված չէին առաջարկվող ապրանքների դեղաձևերը:
-«ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում ընթացակարգի հրավերի N 2 հավելվածում /Հայտարարություն մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին/ սխալ էր նշված մասնակցի անվանումը, բացակայում էր ընթացակարգի հրավերի N 2.1 հավելվածով /մասնակցի իրական շահառուների մասին տվյալներ/ ներկայացված աղյուսակի 2-րդ սյունակի՝ ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հավաստող փաստաթղթի տեսակըև հրավերի N 3.1 հավելվածում /մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ աղուսակի 1-ին սյունակի /չափաբաժնի համարը/ 1-ին տողում սխալ էր նշված չափաբաժնի համարը, նույն աղուսյակի 5-րդ սյունակում /տեխնիկական բնութագիր/ նշված չէին առաջարկվող ապրանքների դեղաձևերը:

-«Լիկվոր» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում ընթացակարգի հրավերի Հավելված 2.1-ով ներկայացված՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալները չէին համապատասխանում սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 8-րդ ենթակետի պահանջներին:

«Գնումների մասին» օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» պարբերության, Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի թ. պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

13.05.2019թ. հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և հանձնաժողովի քարտուղարը **www.armeps.am** կայքի միջոցով ծանուցեց մասնակիցների վերը նշված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» պարբերությունը, Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի թ. պարբերությունը, նույն օրը հանձնաժողովի քարտուղարը «Լիկվոր» ՍՊԸ-ին ծանուցեց շտկել հրավերի Հավելված 2.1-ով ներկայացված՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալները:

2.3 Մասնակիցները սահմանված ժամկետում շտկեցին վերը նշված անհամապատասխանությունները:

«Լիկվոր» ՍՊԸ-ն Էլ. Փոստի միջոցով ներկայացրեց պարզաբանում, համաձայն որի.

«Լիկվոր» ՓԲԸ-ի բաժնետերերն են հանդիսանում Մարգիս Ռուբենի Մաթևոսյանը, Հովհաննես Անուշավանի Ղազարյանը և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (EBRD), քանի որ բաժնետերերից մեկը հանդիսանում է կազմակերպություն և ղեկավարվում է խորհրդի կողմից, այդ իսկ պատճառով չենք կարող տրամադրել անձնագրային տվյալներ: Կից ներկայացնում ենք Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրամադրված բաժնետերերի մասին փաստաթուղթը: /Փաստաթուղթը ներկայացվել է սակայն հրապարակման ենթակա չէ/:

Հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համարել շտկված:

2.4 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը՝ այդ թվում տեխնիկական բնութագրերը, գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են **«ՀՀ ՊՆ ՆՏԱՊ-ՀՄԱԱՊՁԲ-9/3»** ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող՝

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Մ.Ամիրյան)

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Հ/մ	Քանակը	Նախահաշվային գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպություններ				1-ին տեղ զբաղեցնող կազմակերպություն
					անվանումը	գնային առաջարկը			
						արժեքը	ԱԱՀ-ն	գինը	
1	ատրակուրիում (ատրակուրիումի բեզիլատ), atracurium (atracurium besilate)	հատ	500	475,000	«Արֆարմացիա» ՓԲԸ	195 000	39 000	234 000	«Արֆարմացիա» ՓԲԸ
2	իզոֆլուրան isoflurane	հատ	120	3,540,000	«Թեոֆարմա» ՍՊԸ	2 900 000	580 000	3 480 000	«Թեոֆարմա» ՍՊԸ
3	Ադամանդյա կանաչ	հատ	250	29,750	«ԼԵՑԿՈ» ՍՊԸ	23 777.08	4 755.42	28 532.5	«ԼԵՑԿՈ» ՍՊԸ
4	լիդոկային lidocaine	հատ	50	165,500	«Արֆարմացիա» ՓԲԸ	140 833.33	28 166.67	169 000	Չկայացած /ոչ մի հայտ չի բավարարում հրավերի պահանջներին/
5	միդազոլամ midazolam	հատ	40	55,056	Չկայացած				Ոչ մի հայտ չի ներկայացվել
6	հալոպերիդոլ , haloperidol	հատ	100	9,600	«Արֆարմացիա» ՓԲԸ	7 833.33	1 566.67	9 400	«Արֆարմացիա» ՓԲԸ
7	ցիպրոֆլոքսացին (ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ), դեքսամեթազոն ciprofloxacin (ciprofloxacin hydrochloride), dexamethasone	հատ	150	252,000	«Լիկվոր» ՓԲԸ	210 000	42 000	252 000	«Լիկվոր» ՓԲԸ
8	դեքսամեթազոն dexamethasone	հատ	150	120,000	Չկայացած				Ոչ մի հայտ չի ներկայացվել
9	կարբոմեր 974Պ, carbomer 974P	հատ	10	16,053	Չկայացած				Ոչ մի հայտ չի ներկայացվել
10	դիազեպամ, diazepam	հատ	1,000	78,100	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	65 000	13 000	78 000	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
11	քլորպրոմազին (քլորպրոմազինի հիդրոքլորիդ) chlorpromazine (chlorpromazine hydrochloride)	հատ	100	2,550	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	2 080	416	2 496	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
12	տոբրամիցին tobramycin, դեքսամեթազոն dexamethasone	հատ	20	34,560	Չկայացած				Ոչ մի հայտ չի ներկայացվել
13	ատրոպին (ատրոպինի սուլֆատ), atropine (atropine sulfate)	հատ	1,000	64,000	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	49 000	9 800	58 800	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
14	էթանոլ, ethanol	լիտր	500	550,000	«ԼԵՑԿՈ» ՍՊԸ	479 166.67	95 833.33	575 000	«ԼԵՑԿՈ» ՍՊԸ

15	մեթիլպրեդնիզոլոն (մեթիլպրեդնիզոլոն նատրիումի սուկցինատ) methylprednisolone (methylprednisolone sodium succinate)	հատ	200	1,080,960	Չկայացած				Ոչ մի հայտ չի ներկայացվել
16	մեթիլպրեդնիզոլոն methylprednisolone	հատ	1,000	46,700	Չկայացած				Ոչ մի հայտ չի ներկայացվել
17	դեքսամեթազոն, նեոմիցին (նեոմիցինի սուլֆատ), պոլիմիքսին B (պոլիմիքսին B-ի սուլֆատ) dexamethasone, neomycin (neomycin sulfate), polymyxin B (polymyxin B sulfate)	հատ	50	195,000	Չկայացած				Ոչ մի հայտ չի ներկայացվել
18	թիոպենտալ (թիոպենտալ նատրիում), thiopental (thiopental sodium)	հատ	300	599,940	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	499 800	99 960	599 760	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
19	Ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ) phenylephrine (phenylephrine hydrochloride)	հատ	60	5,250	Չկայացած				Ոչ մի հայտ չի ներկայացվել
20	լևոմեպրոմազին levomepromazine	հատ	100	20,740	«Արֆարմացիա» ՓԲԸ	19 083.33	3 816 .67	22 900	Չկայացած /ոչ մի հայտ չի բավարարում հրավերի պահանջներին/
21	ադեմետիոնին ademetionine	հատ	140	419,468	Չկայացած				Ոչ մի հայտ չի ներկայացվել
	Բարիումի սուլֆատ	հատ	300	75,000	«ԼԵՅԿՈ» ՍՊԸ	45 000	9 000	54 000	«ԼԵՅԿՈ» ՍՊԸ
23	գանցիկլովիր ganciclovir	հատ	30	207,888	Չկայացած				Ոչ մի հայտ չի ներկայացվել
24	տրանեքսամաթթու	հատ	160	266,752	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	213 280	42 656	255 936	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /**ճիշտ են**/:

3.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի, սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.6 և 7.7 կետերի պահանջները, և քանի որ «**ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/3**» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի բոլոր չափաբաժինների համար հայտ էին ներկայացրել միայն մեկական մասնակից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ 4-րդ, 20-րդ /«Արֆարմացիա» ՓԲԸ/ և 14-րդ/«ԼԵՅԿՈ» ՍՊԸ/ չափաբաժինների մասով մասնակիցների ներկայացրած գները գերազանում էին նշված չափաբաժինների համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի ներկայացված գների նվազեցման նպատակով 15.05.2019թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և 16.05.2019թ. ժամը 14:45-ին-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) գների նվազեցման նպատակով կազմակերպել միաժամանակյա բանակցություններ, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը համակարգի (www.armeps.am) միջոցով դրա մասին ծանուցեց նշված մասնակիցներին:

Նշված օրը և ժամին բանակցություններին ներկայացան «Թեոֆարմա» ՍՊԸ-ի, «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի և «Լիկվոր» ՍՊԸ-ի ներկայացուցիչները:

«Թեոֆարմա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը 2-րդ չափաբաժնի մասով իր կողմից ներկայացված նախնական 3 480 000 ՀՀ դրամը նվազեցրեց՝ դարձնելով 3 456 000 ՀՀ դրամ:

«Լիկվոր» ՓԲԸ-ի ներկայացուցիչը 7-րդ չափաբաժնի մասով իր կողմից ներկայացված նախնական 252 000 ՀՀ դրամը նվազեցրեց՝ դարձնելով 243 000 ՀՀ դրամ:

«ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը 14-րդ չափաբաժնի մասով իր կողմից ներկայացված նախնական 575 000 ՀՀ դրամը նվազեցրեց՝ դարձնելով 550 000 ՀՀ դրամ, իսկ մնացած չափաբաժինների մասով չցանկացավ փոփոխել նախորոք ներկայացված գնային առաջարկը:

«Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի և «Արֆարմացիա» ՍՊԸ-ի տնօրենները չներկայացան բանակցությունների, հետևաբար նրանց կողմից ներկայացված գնային առաջարկները մնացին անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/3» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Մ.Ամիրյան)

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ **16.05.2019թ.**-ին, հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին և 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Արֆարմացիա» ՓԲԸ-ին**, 2-րդ չափաբաժնի մասով՝ **«Թեոֆարմա» ՍՊԸ-ին**, 3-րդ և 22-րդ չափաբաժինների մասով՝ **«ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ին**, 7-րդ չափաբաժնի մասով՝ **«Լիկվոր» ՓԲԸ-ին**, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 18-րդ և 24-րդ չափաբաժինների մասով՝ **«Նատալի ֆարմ» ՍՊԸ-ին**: Բավարար գնահատված մյուս մասնակիցները ճանաչվեցին հաջորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ ներկայացրած գնային առաջարկների շահավետության:

Հիմք ընունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1) և 3) կետերը, հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 4-րդ, 20-րդ */ոչ մի հայտ չի համապատասխանում հրավերի պահանջներին/*, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 21-րդ և 23-րդ */Ոչ մի հայտ չի ներկայացվել/* չափաբաժինները հայտարարել չկայացած:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հայտերի բացման նիստի արդյունքները:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն (այսուհետ՝ կոմիտե) առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Մ.Ամիրյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

«**ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-9/3**» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի հանձնաժողովի նիստը հրավիրել *ոչ ուշ* քան կոմիտեի ներկայացրած՝ հարցման մասին տեղեկատվությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվա **ժամը** 17^{30}-ն, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)		Ա.Նազարյան
Գնահատող		Վ.Վահանյան
Գնահատող		Հ.Ավետիսյան
Գնահատող		Մ.Գալստյան
Գնումները համակարգող		Մ.Ամիրյան